

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 20**

**ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության**

13.10.2017թ.

**ք.Վանաձոր**

**Մասնակցում էին**

Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար  
Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ  
Հ.Պապոյանը, Ս.Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Գ.Հակոբյանը,  
Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Վ.Դոխոյանը, Ա.Բաղդասարյանը -  
մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

**Օրակարգում՝**

Ը ն թ ա գ ի կ հ ա ր գ ե ր

**Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝**

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին՝  
Համայնքների ղեկավարներին առաջարկել ներկայացնելու տեղեկատվություն համայնքներում  
իրականացվող 2017թ. շինարարության ծավալների վերաբերյալ:

/Ժամկետ՝ 16.10.2017թ./

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին,  
ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Ջանազյանին՝  
Առաջարկել համայնքների ղեկավարներին մինչև սույն թվականի դեկտեմբերի 1-ը պայմանագրեր կնքել  
համայնքներում գործող տնտեսվարող սուբյեկտների հետ, ինչպես նաև ներկայացնել տեղեկատվություն  
2017թ. ընթացքում աղբահանության վարձավճարների գանձման ընթացքի վերաբերյալ:

/Ժամկետ՝ 16.10.2017թ./

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության  
պետ Գ.Հակոբյանին՝  
Ամբողջական համեմատական տեղեկատվություն ներկայացնել մարզի գյուղատնտեսական  
արտադրանքի 2017թ. ծավալների, ինչպես նաև վարելահողերի և հողատարածքների օգտագործման  
ծավալների վերաբերյալ:

/Ժամկետ՝ 16.10.2017թ./

**ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**

Արձ.Ս. Մակարյան  
Հեռ. 0322 /4-32-99/